

Ն ե ր ա ծ ո թ յ ո ճ

ԼՂՀ ազգային վիճակագրական ծառայության «Լեռնային Ղարաբաղի Հանրապետության սոցիալ-տնտեսական վիճակը» տեղեկատվական եռամսյակային զեկույցը կառուցված է ԼՂՀ վիճակագրության պետական խորհրդի 2013թ. հունվարի 16-ին N1-Ն որոշմամբ ընդունված «2013 ԹՎԱԿԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՎԻՃԱԿԱԳՐԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԾՐԱԳՐՈՎ» նախատեսված ճյուղային (գերատեսչական) և տեղական (համայնքային) վիճակագրություն իրականացնող մարմինների, այլ կազմակերպությունների հաշվետվությունների, հաշվարկների և ԼՂՀ ազգային վիճակագրական ծառայության կողմից դրանց ամփոփման, ինչպես նաև մշակվող ցուցանիշների, իրականացվող հետազոտությունների, տեղեկատվա-հրատարակչական գործունեության արդյունքում (ժողովածուներ, տեղեկագրեր, մամուլ հաղորդագրություններ, վերլուծական զեկույցագրեր) ամփոփված նյութերի հիման վրա:

Որպես Հայաստանի Հանրապետության և Լեռնային Ղարաբաղի Հանրապետության վիճակագրական դաշտերի ներդաշնակեցմանն ուղղված քայլ՝ 1999թ. ապրիլից սկսած՝ «Լեռնային Ղարաբաղի Հանրապետության սոցիալ-տնտեսական վիճակը» վիճակագրական զեկույցները ներկայացվում են «Հայաստանի Հանրապետության սոցիալ-տնտեսական վիճակը» վիճակագրական զեկույցների մասնատիպ կառուցվածքով, որոնց բովանդակությունն էլ ներկայացվում է Արժույթի միջազգային հիմնադրամի (IMF) կողմից մշակված՝ «Տվյալների տարածման ընդհանուր համակարգի» հատվածներին համապատասխան:

Եռամսյակային զեկույցներում ընդգրկվում է «Մեթոդաբանական պարզաբանումներ» հավելվածը, որում հակիրճ ներկայացվում են հիմնական մակրոտնտեսական ցուցանիշների բնութագրերը, հաշվարկման մեթոդաբանությունը: Ներկայացված է նաև ԼՂՀ և ԱՊՀ երկրների որոշ վիճակագրական ցուցանիշներ, ինչպես նաև հաշվետու ժամանակաշրջանում ԼՂՀ ազգային վիճակագրական ծառայության հրատարակումների ցանկը:

«Լեռնային Ղարաբաղի Հանրապետության սոցիալ-տնտեսական վիճակը» եռամսյակային զեկույցների օրինակները պահվում են ԼՂՀ ազգային վիճակագրական ծառայության գրադարանում:

Լեռնային Ղարաբաղի Հանրապետության ազգային վիճակագրական ծառայությունը իր երախտագիտությունն է հայտնում սույն վիճակագրական հրատարակման հիմքը կազմող տեղեկատվություն տրամադրողներին և ակնկալում՝ նրանց և այլ սպառողների՝ վիճակագրական հրատարակումների հետագա կատարելագործմանն ուղղված առաջարկությունները:

Լեռնային Ղարաբաղի Հանրապետության
ազգային վիճակագրական ծառայություն, 2013թ.

«Լեռնային Ղարաբաղի Հանրապետության սոցիալ-տնտեսական վիճակը» եռամսյակային զեկույցների հատվածներում առկա նախնական կամ հաշվարկային ցուցանիշները հաջորդող հրատարակումներում կարող են ենթարկվել ճշգրտման, պայմանավորված այն հանգամանքով, որ հաշվետու ժամանակահատվածը հնարավորություն չի ընձեռում սկզբնական տեղեկատվության արժանահավատությունն առավել խորությամբ ստուգելու, ինչի իրականացումը պահանջում է լրացուցիչ ժամանակ:

Պայմանական նշաններ

երևույթը բացակայում է	-
տվյալներ չկան	--
չնշին մեծություն	0.0
ցուցանիշը չի հաշվարկվում	X
տվյալները ճշգրտված են	#

Առանձին դեպքերում բաղադրիչների գումարի և արդյունքի միջև աննշան տարբերությունները բացատրվում են տվյալների կլորացմամբ: